

մեծագին մարգարտից ընդելուզեալ: Ջոր բերեալ մեր՝ մեծաւ ուրախութեամբ ընկալաւ թագաւորն մեր, եւ պսակեաց ընտիր պսակաւն գեղեցիկ գՌոբին, որդի դստերն եղբօրն իւրոյ եւ որդի Բրընձին Անտիոքայ Ռեմընդին. ' իԹու. Հայոց ՌԿ. ' խօսն Սուրբ Աստուածածնին, յաւգոստոսի ԺԵ: Եւ թագաւորէ ընդ իւր՝ Հայոց, ' իկամս Աստուծոյ»:

Բայց տեսչութիւնն վերին՝ եւ թագաւորին եւս Լեւոնի յետոյ, ա՛յլ ազգ տնօրինեցին: Քանզի անդստին՝ իԺամանակի դեսպանութեան Հեթմոյ, յորում եւ մեռեալ կարծի տարամերժեալ թագուհին Լեւոնի, խորհեցաւ սա կրկին ամուսնութեամբք հաստատել զթագաւորութիւն իւր եւ զթոռնէին (Ռուբինի). եւ հաճեցաւ նմա եւ ինքեան կին ածել՝ իդստերաց ծանօթի եւ սիրելոյ իւրոյ թագաւորին Կիպրոսի, ուր եւ չոգաւ խօսել եւ ածել զընտրեալն: Հնօքք ամօք յառաջ վախճանեալ էր թագաւորն այն, Ամաւրի, թողեալ ժառանգ զՀիւկ Ա գորդի իւր, զծնեալն յառաջնոյ կնոջէ իւրմէ յԵշիվայ Իպլինեան, յորմէ ծնեալ էր եւ զՀելվիս կամ Ելոյիսա. սա եղեւ կին Ռուբինի-Ռեմընդի, թեպէտ եւ ասիւր յառաջագոյն եղեալ կին Եւտայ Տամբիերի. վասն որոյ խնդիր եղեւ յատենի Քահանայապետին, եւ քննութիւնք յԱսորիս՝ յԱնտիոքայ պատրիարքէն, այլ օրինաւոր դատեցաւ ամուսնութիւն Ռուբինի: Վերջին կին (երրորդ) ածեալ էր Ամաւրեայ (յամի 1198) զԳգապել՝ ժառանգ թագաւորութեանն Երուսաղեմի, զեղեալն նախ կին Կոնրադայ Մոնֆերրադոյ²¹⁰, ապա Հենրեայ Շամբանեայ բարեկամին Լեւոնի, եւ յետոյ ինքեան Ամաւրեայ, որում եբեր եւ զժառանգութիւն թագաւորութեանն Երուսաղեմի. եւ ծնաւ զատ յայլոց՝ դստերս, զՄիպիլ եւ զՄելիսենտ. զվերջինս էառ իւր կին՝ Պեմունդ Դ հակառակորդն Ռուբինի եւ Լեւոնի. իսկ սա մերս թագաւոր էառ զառաջինն, «զանուանեալն Սիպիլ, որ էր իմաստուն եւ համեստ եւ երկիրւած՝ իՏեառնէ», ըստ պատմչին մերոյ. բայց յայնժամ տակաւին տղայ էր, ոչ աւելի քան զմետասան ամաց, «եւ եբեր յայսկոյս (' իՀայս), եւ արարին հարսանիս. եւ կային ուրախութեամբ»: Պատմիչ մեր ոչ համահարս ասէ զկանայս երկոցուն փեսայացելոցն (Լեւոնի եւ Ռուբինի). բայց ըստ արեւմտեան պատմչաց՝ համահարք էին, որպէս նշանակեցաք, այլ ոչ համամարք:

²¹⁰ Զծնեալն յայսմ առաջին ամուսնութենէ՝ զՄարիամ՝ էառ իւր կին Յովհան Պրիեն ընծայեալն թագաւորութեան Երուսաղեմի. այն որ յետ մահուան սորա (1211) էառ ՚ի կնութիւն զմերոյս Լեւոնի դուստր Ռիթա (1214):